



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

24 ԳԵՎԵՏԵՐԵՐ 2021 թ.
№ 15 (1079)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
երկշաբաթաբեր • հրատարակման 56-րդ տարի

ԽԱՉԱՏՈՐ ԱՐԿԹԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՆԱԿԱՏՐ

Սրբուհի Գևորգյանը՝ Մանկավարժական համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար

Մանկավարժական համալսարանում դեկտեմբերի 18-ին տեղի ունեցավ ՀՀ ԿԳՄՍ հոգաբարձուների խորհրդի նիստ՝ խորհրդի նախագահ, ԿԳՄՍ փոխնախարար ժամանա Անդրեասյանի գլխավորությամբ և հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կամո Վարդանյանի քարտուղարությամբ: Նիստի օրակարգում մեկ հարց էր՝ ռեկտորի ընտրություն: Խորհրդի 20 անդամից ներկա էր 18-ը:

Ռեկտորի թափուր տեղի համար դիմել էր մեկ թեկնածու՝ բուհի ռեկտորի պաշտոնակատար Աշոտ Խոնեցյանը:

Նա ներկայացրեց իր ծրագիրը, որից հետո խորհրդի անդամները հարցեր ուղղեցին բուհի զարգացման ծրագրի, անելիքների մասին: Ելույթ ունեցավ խորհրդի 7 անդամ, ձևավորվեց հաշվիչ հանձնաժողով՝ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետի տեղակալ Լուսինե Գրիգորյանի նախագահությամբ: Անդամներ ընտրվեցին բուհի պրոֆեսորներից Սամվել Պիպոյանը և ուսանողուհի Արմինե Զարուբյանը:

Խորհրդի անդամները փակ, գաղտնի քվեարկության արդյունքում անվտանգություն հայտնեցին ռեկտորի թեկնածուին՝ ծայրերի հետևյալ բաշխմամբ՝ 13 դեմ, 1 անվավեր, 4 կողմ:

Նիստի երկրորդ հատվածում խորհրդի նախագահ ժամանա Անդրեասյանն առաջարկեց ընտրել ռեկտորի նոր ժամանակավոր պաշտոնակատար: Նա ներկայացրեց բուհի պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրո-



ֆեսոր Սրբուհի Գևորգյանի թեկնածությունը: Այլ թեկնածու չառաջարկվեց: ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահ Կարեն Քեռյանը երկրորդեց ժամանա Անդրեասյանին, նկատելով, որ անձամբ մի քանի անգամ շփում է ունեցել Սրբուհի Գևորգյանի հետ, և նրա մասնագիտական, պրոֆեսիոնալ որակները բարձր է գնահատում:

Սրբուհի Գևորգյանին հրավիրեցին նիստին և տեղեկացրին խորհրդի որոշման մասին: Ապա ներկայացրին միաձայն քվեարկությամբ՝ 16 կողմ ծայրերով (խորհրդի 2 անդամ հեռացել էր նիստից), Սրբուհի Գևորգյանն ընտրվեց ՀՀ ԿԳՄՍ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար:

ՍԻՐԵԼԻ՝ ԴԱՍԱԽՈՍՆԵՐ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ, ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Ջերմորեն շնորհավորում են բոլորիդ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Անցնող տարին Հայաստանի և Արցախի համար լի էր անմեկնելի մարտահրավերներով: Հուսանք, որ 2022 թվականը կլինի խաղաղության և ազգային միասնության, նոր մտահղացումների իրականացման տարի, որը հայ ժողովրդին կբերի արժանապատիվ ապրելու հույս ու հավատ:

Ազգային նպատակների իրագործման, համախմբման և Հայաստանի ապագային միտված հիմնախնդիրների լուծումը մեծապես պայմանավորված է մանկավարժների գործունեությամբ, ապագա ուսուցիչներ կրթելու գործին անմնացորդ նվիրումով, շիտակ ու հաստատակամ դիրքորոշմամբ, մանկավարժներ, որոնք առաքելություն ունեն կրթելու գիտակ ու բանիմաց, առաջ նայող, արժանապատիվ ու նվիրյալ սերունդ:

Թող եկող տարին բոլորիդ ընտանիքներին, մանկավարժական համայնությանը և, ընդհանրապես, հայ ժողովրդին երջանկություն բերի, ամոքի Արցախի ու Հայաստանի սահմաններին նահատակված քաջերի հարազատների վիշտը, հույս պարզև նրանց վիրավոր հոգիներին: Մենք միշտ նրանց կողքին ենք, պատրաստ ենք նրանց հետ կիսել դժվարությունները, աջակցել բոլոր հարցերում:

Մաղթենք, որ գալիք 2022 թվականը մեզ ոգու ուժ ու ամբողջություն տա՝ ազգային համերաշխության և համախմբվածության շուրջ միավորելով ողջ հայ ժողովրդին, խաղաղություն բերելով Արցախի և Հայաստանի սահմաններին:

Մեր ամենօրյա աշխատանքով պիտի հզորացնենք Հայաստանը, որպեսզի վստահ և արժանապատիվորեն նայենք ապագայի աչքերին:



Սրբուհի ԳեՎՈՐԳՅԱՆ
ՀՀ ԿԳՄՍ ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱՇՏՈՆԱԿԱՏՐ

ԿԳՄՍ փոխնախարարը ներկայացրեց ռեկտորի պաշտոնակատարին

Դեկտեմբերի 22-ին ԿԳՄՍ փոխնախարար, բուհի հոգաբարձուների խորհրդի նախագահ ժամանա Անդրեասյանն այցելեց խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան՝ ներկայացնելու համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Սրբուհի Գևորգյանին:

«Ինձ համար պատիվ է գտնվել Մանկավարժական համալսարանում և լինել հոգաբարձուների խորհրդի նախագահը, որն ինձ համար մեծ պատասխանատվություն է», -ասաց փոխնախարարը:

Խոսելով ՀՀ ԿԳՄՍ հոգաբարձուների խորհրդի նիստի մասին, ուր ռեկտորի պաշտոնի համար ներկայացված թեկնածուն բավարար ծայրեր չէր ստացել, ժամանա Անդրեասյանը հիշեցրեց, որ խորհրդի անդամները միաձայն համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար ընտրեցին ՀՀ ԿԳՄՍ պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանին:

Փոխնախարար ժամանա Անդրեասյանը շնորհակալություն հայտնեց Սրբու-



հի Գևորգյանին՝ դժվար ժամանակահատվածում համալսարանի ղեկավարման գործը ստանձնելու համար, նաև ներկայացրեց նրա անցած ճանապարհը համալսարանում՝ դասախոսից մինչև դեկան և պրոռեկտոր ուսումնագիտական գծով, ինչը վկայում է նրա մասնագիտական և կառավարչական բարձր որակական պատրաստվածության և հմտությունների մասին:

ԿԳՄՍ փոխնախարարն իր պատրաստակամությունը հայտնեց՝ կաջակցի համալսարանի բոլոր խնդիրների լուծմանը, կլսի բոլոր հարցերն ու առաջարկությունները և կսատարի բուհի ղեկավարման ու գործունեության գործընթացներին:

Համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Սրբուհի Գևորգյանը շնորհակալություն հայտնեց

բուհի ղեկավարման գործն իրեն վստահելու համար՝ տեղեկացնելով, որ գիտի բոլոր խնդիրները և, համալսարանի առաքելությամբ համապատասխան, հաշվի կառնվեն բոլոր առանձնահատկություններն ու առաջնահերթությունները՝ նպաստելու ծառայած խնդիրների լուծմանը: Նա ընդգծեց, որ համալսարանն ունի լավ ներուժ, լավ պրոֆեսորադասախոսական կազմ և բուհի համար առաջնային է լինելու մասնագիտական կրթական ծրագրերի ու մասնագիտական նկարագրերի վերանայումը, որի հետ կապված արդեն կան որոշակի մոտեցումներ: Սրբուհի Գևորգյանը խոսեց ուսուցիչների վերապատրաստման գործընթացի և ուսուցիչ գործունեության վերափոխման մասին, որը պայմանավորված է համալսարանի՝ մեթոդական, գիտական, գիտակրթական բաղադրիչներին համապատասխան գործունեությամբ:

Ամփոփելով խոսքը՝ նկատեց. «Հուսանք, որ ի դեմս Ձեզ, մենք կունենանք մասնագիտական աշխատանքի որակը ներկայացնելու հնարավորություն, օգտագործելով համալսարանի ողջ ներուժը՝ կկարողանանք լուծել բոլոր խնդիրները: Ծնորհակալություն մեր կողքին լինելու համար»:



ՃԱԳՈՆԱԿԱՆ ԱՎԱՆԳՈՒՅԹՆԵՐԻ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Մանկավարժական համալսարանում դեկտեմբերի 4-ին հյուրընկալվել էր Հայաստանում ճապոնիայի Արտակարգ և լիազոր դեսպան Ե. Գ. Մասանորի Ֆուկուշիման:

Այցի նպատակն էր մասնակցել ճապոնական աշխարհային ավանդական թեյախմությանը, որը կազմակերպել էր «Հիկարի» հայ-ճապոնական գիտակրթական կենտրոնը:

ՀՊՄՀ-ի աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը ողջունեց մեր երկրում ճապոնիայի դեսպանին և միջոցառման կազմակերպման համար շնորհակալություն հայտնեց «Հիկարի» կենտրոնին: Պրոռեկտորը կարևորեց ծնունդի անցկացումը, ինչը կնպաստի, որ ապագա մանկավարժները տեղեկացված լինեն միջազգային տարբեր ավանդույթների մասին և հետագայում դա փոխանցեն իրենց աշակերտներին:

«Հիկարի» կենտրոնի տնօրեն Կարինե Փիլիպոսյանը շնորհակալություն հայտնեց միջոցառումը Մանկավարժական համալսարանում անցկացնելու համար և հույս հայտնեց, որ համագործակցությունը կլինի շարունակական: Նա ներկայացրեց ճապոնական թեյախմության առանձնահատկությունները՝ անդրադառնալով թեյի պատմությանը՝ 8-րդ դարից մինչև մեր օրերը:

Կարինե Փիլիպոսյանն ըստ ժամանակաշրջանների ներկայացրեց թեյախմության կազմակերպման կանոնները, նրա նշանակությունը ու առանձնահատկությունները, թեյախմության համար նախ կանոններ սահմանեցին հոգևորականները, ապա սիրելի ըմպելիքը վայելելու արարողությունը ներգրավվեցին նաև ազնվականներն ու զինվորականները: Ի դեպ, վերջիններս թեյախմության մասնակցում էին հատկապես

մարտից առաջ՝ «մաքրվելու» և ուժ հավաքելու նպատակով:

«Հիկարի» կենտրոնի աշխատակիցները միջոցառման ընթացքում ծանոթացրին թեյախմության կանոններին, ճապոնիայում թեյ աճեցնելու շրջաններին, թեյի օգտակար հատկություններին, պատրաստման և մշակման յուրահատկություններին:

Թեև հայերի համար ճապոնական թեյի համն անսովոր է, սակայն ներկաները տեղում փորձեցին իսկական ճապոնական թեյը՝ պատրաստված թեյի պատրաստման բոլոր կանոնների պահպանմամբ. նախ ջուրը եռացնել և առեցնել մինչև 60, ապա ընտրել տեղերը, որոնցով, ի դեպ, կարելի է պատրաստել 6-10 զավաթ թեյ: ճապոնական թեյի կարևոր առանձնահատկություններից է նաև այն, որ թեյի մեջ օգտագործված տերևով կարելի է պատրաստել աղցան:

Ներկաների համար ճապոնական թեյախմությունն անսովոր, բայց յուրատեսակ արարողություն էր. աշխարհային ավանդական թեյախմություն Հայաստանում անցկացվում էր առաջին անգամ՝ իրեն բնորոշ բոլոր կանոններով՝ սպասքից մինչև մատուցման յուրահատկություններ: Ներկայացվեց նաև ճապոնական ավանդական հագուստը՝ կիմոնոն, նրա առանձնահատկություններն ու նշանակությունը, ապա ներկաներն ուղղեցին իրենց հետաքրքրող մի շարք հարցեր:

Հայաստանում ճապոնիայի Արտակարգ և լիազոր դեսպան Ե. Գ. պարոն Մասանորի Ֆուկուշիման շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպման և ճապոնական թեյախմության հանդեպ ունեցած հետաքրքրության համար:

Քրիստինե ՄԵԼՆՈՆՅԱՆ

Ռուսաց լեզուն և 21-րդ դարի գլոբալ մարտահրավերները եվրասիական տարածքում

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, արտերկրում ռուսաց լեզու և գրականություն դասավանդողների համար, դեկտեմբերի 20-21-ն անցկացվեց միջազգային գիտապրակտիկ աշխատաժողով՝ «Ռուսաց լեզուն և 21-րդ դարի գլոբալ մարտահրավերները եվրասիական տարածքում» խորագրով: Այն կազմակերպվել էր Ռուսական պետական հունամիտար համալսարանի, ՀՊՄՀ-ի, Երևանում ռուսական մշակույթի կենտրոնի և Հայաստանում ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների ասոցիացիայի համատեղ ջանքերով: ՌԴ-ի և Հայաստանի համատեղ աշ-

Բացման խոսքով հանդես եկավ Ռուսական պետական հունամիտար համալսարանի ռազմավարական նախագծերի բաժնի ղեկավար, պատմական գիտությունների թեկնածու Յուրի Ֆիլիպովը, ով խոսեց ռուսաց լեզվի դասավանդման հիմնախնդիրների և քննարկման դրված թեմաների շուրջ՝ շեշտելով, որ ռուս մասնագետների ներկայացվելիք դասախոսությունները կհետաքրքրեն ԱՊՀ երկրների՝ ռուսաց լեզվի զարգացմամբ շահագրգիռ մասնագետներին:

Հայաստանում «Ռուստորուղին-չեստոլյի» ներկայացուցիչ Սոնա Սարաջյանն աշխատաժողովի մասնակից-



խատաժողովին «Ձուն» հարթակում խառը և առցանց ձևաչափով միացել էին նաև այլ երկրների մասնակիցներ: Քննարկմանը մասնակցելու էին հրավիրվել բարձրագույն, միջին և լրացուցիչ կրթության հաստատությունների ռուսաց լեզվի և գրականության դասավանդողներ, հետազոտողներ, գիտության և մշակույթի աշխատողներ, ռուսաց լեզուն կիրառող անկախ եղիմակներ և այլն:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը ողջունեց ներկաներին աշխատաժողովի կազմակերպման առթիվ՝ ընդգծելով ԱՊՀ երկրներից ռուսաց լեզվի մասնագետների ընդգրկվածության կարևորությունը:

«Քննարկվող թեմաների արդիականությունը կապված չի հարուցում այնպես, ինչպես և Հայաստանի դպրոցներում և բուհերում ռուսաց լեզվի՝ որպես մայրենի, ոչ մայրենի և օտար լեզուների ուսուցման համակարգը, կարծում եմ նաև հետխորհրդային տարածքում այն կրում է քաղաքական և սոցիալական գործոնների ազդեցությունը, -ասաց Ս. Գևորգյանը, -որն էլ իր հերթին անհրաժեշտություն է դարձնում մեր երկրներում լրացուցիչ շահագրգռվածության փնտրտուքը ռուսաց լեզվի զարգացման ուղղությամբ»:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարն ընդգծեց ծրագրի օրակարգային հարցերը՝ կլոր սեղաններ, ռուսաց լեզվի դասավանդման հիմնախնդիրներին վերաբերող բանավեճեր, նորարարական փորձի փոխանակում, հույս հայտնելով, որ մասնակիցները կհամագործակցեն ոչ միայն ներկայում, այլև ապագայում:

«Մեզ համար կարևոր են այն նախագծերը, որոնք միավորում են ոչ միայն մանկավարժական հանրությանը, այլև, նախ և առաջ, մեր երկրների երիտասարդությանը, որոնք համար այսօր արդեն անհրաժեշտ է ստեղծել միասնական կրթական և մտավոր տարածք», -ամփոփեց Ս. Գևորգյանը:

Ներին փոխանցեց Երևանում Ռուսաստանի Գիտության և մշակույթի կենտրոնի ղեկավար Վադիմ Ֆեֆիլովի ողջույնի խոսքը: «Ընթացիկ տարում առցանց ձևաչափով անցկացվող աշխատաժողովին մասնակցել են ինչպես Ռուսաստանի և Հայաստանի, այնպես էլ ԱՊՀ այլ երկրների ռուսաց լեզվի մասնագետներ, ինչը խոսում է դրա պահաջվածության և արդիականության մասին: Աշխատաժողովի թեման արտահայտում է ներկայիս դժվար ժամանակներն ու ընդգծում ռուսաց լեզվի և գրականության դասավանդման խնդիրները՝ դպրոցում և բուհական համակարգում բարձրաձայնելու անհրաժեշտությունը»:

Վադիմ Ֆեֆիլովն ընդգծել էր նաև, որ կարևոր և անհրաժեշտ է գտնել ռուսագիտության զարգացմանը խթանելու միջոցներ, ապա վստահություն էր հայտնել՝ մասնագետները կքննարկեն ոլորտի խնդիրներն ու ձեռքբերումները, իսկ աշխատաժողովն էլ կնպաստի միջազգային համագործակցության հետագա զարգացմանը, որին կսատարի նաև իր ղեկավարած կառույցը:

Ռուսական պետական հունամիտար համալսարանի Մշակույթի պատմության ֆակուլտետի պրոֆեսոր Ալեքսանդր Մարկովը հանդես եկավ դասախոսությամբ: Նա անդրադարձավ Ռուսերենին որպես ակադեմիական լեզվի, ընդգծեց համաշխարհային մշակույթում և մասնավորապես գրականագիտության մեջ նրա դերը, հիմնավորելով, որ համաշխարհային գործընթացներում ռուսաց լեզուն ոչ միայն չի նահանջում, այլև առաջնային դերում է:

Ռուսերենը կարող է դառնալ գիտական և հետազոտությունների լեզու, այն առաջընթաց է ապրում՝ հավակնելով դառնալ համաշխարհային մշակութային լեզու, ռուսաց լեզուն մեր լաբորատորիան է՝ դասախոսությունն ամփոփեց պրոֆեսորը:

Երկօրյա աշխատաժողովն ընթացավ բուռն քննարկումների արդյունավետ մթնոլորտում՝ հետագա համագործակցության ակնկալիքով:

ԱՌՅԱՆՑ ԳՆԱՄԱՄՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դեկտեմբերի 1-3-ը Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական և Ուկրաինայի Ժիտոմիրի Ի. Ֆրանկի անվան մանկավարժական համալսարանների միջև անցկացվեցին առցանց դասախոսություններ:

Փոխադարձ դասախոսությունների շրջանակներում ուկրաինական բուհի Պատմության ֆակուլտետի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համար «Անդրկովկասի խորհրդայնացումը» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ ՀՊՄՀ համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը:

Մանկավարժական համալսարանի ուսանողների՝ ապագա պատմաբանների և հասարակագետների համար էլ «Արևմտյան Ուկրաինայի խորհրդայնացումը» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ Ժիտոմիրի Ի. Ֆրանկի անվան մանկավարժական համալսարանի համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գալինա Ստառուդոբեցը:

Առցանց դասախոսությունների թեմաների քննարկումը երկուստեք արդյունավետ էր և հետաքրքիր:

Հավելենք, որ մանկավարժական երկու բուհերը պայմանավորվածություն են ձեռք բերել զարգացնել համագործակցությունը երկու ամբիոնների միջև:





կազմակերպության պատվիրած, հետազոտական ռեսուրսների Կոլվկասյան կենտրոնի (ՀՌԿԿ-Հայաստան) և Գերմանիայի Մեծահասակների կրթության ինստիտուտի աջակցությամբ (DIE) 2020-2021թթ.-ին իրականացված հետազոտությունն անդրադարձել է միգրացիայի, կրթության և վերապատրաստման, այդ թվում՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությանը, ինչպես նաև զբաղվածությանը, կրթական և վերապատրաստման ծրագրերի մասնակցությանը, մեծահասակների կրթության ընձեռած հնարավորությունների մասին ընկալումներին, Covid-19-ի շրջանում հեռավար ուսուցմանը:

Հետազոտությանը մասնակցել է 18-64

և պատրաստ է ներկայացնել իր առաջարկությունները:

Բուհը մշտապես մասնակցել է ուսուցիչների վերապատրաստման գործընթացին, ինչը պետության գործառնություն է, և զեկուցողը շեշտադրեց վերապատրաստող կազմակերպությունների ճիշտ ընտրության հարցը:

Վերջինս կարևորեց նաև մեծահասակների հետ աշխատանքի մեթոդիկայի ուղղությամբ դասավանդողների կարողությունների վերապատրաստումը, ֆորմալ կրթությունն ավարտելուց հետո լրացուցիչ կրթական ծրագրերին մասնակցելուն մեծահասակների մոտիվացիան՝ ամփոփելով «21-րդ դարում ոչ ոք այլևս չի կասկածում, որ մեծահասակների կրթությունն ունի հասարակությունը վերափոխելու, մարդկանց կյանքը փոխելու հզոր ներուժ»:

«Կգա ժամանակ, երբ չի լինի ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության տարանջատում», -վստահեցրեց ՀՀ ԿԳՄՍ երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ Գոհար Մամիկոնյանը՝ ուսանողներին հորդորելով անդադար սովորել, որովհետև կրթությունը փոխվել է մարդկության զարգացման ողջ ընթացքում:

ՀՊՄՀ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհակալություն հայտնեց համալսարանը մեծահասակների կրթության հարցի քննարկման հարթակ դարձնելու համար և փաստեց, որ կրթական ծրագրերի բազմազանության մեջ մեծահասակների կրթության խնդիրը ամենաթույլ օղակն է և ամենաբարդ խնդիրը:

«Մեծահասակների կրթությունը Հայաստանում» հետազոտության մեթոդաբանությունն ու արդյունքները ներկայացրին ՀՌԿԿ-Հայաստանի տվյալների հավաքագրման ծրագրերի ղեկավար Էլլա Կարագոլյանն ու Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի ծրագրերի համակարգող Միշա Թադևոսյանը, ովքեր փաստեցին, որ մեծահասակների կրթության այս հետազոտությունն առաջինն է Հայաստանում: Նրանք լիահույս են, որ հետազոտության արդյունքները կնպաստեն մեծահասակների կրթության ուղղված ծրագրերի իրականացմանը:

«21-րդ դարում մեծահասակների կրթությանն ունի հասարակությունը վերափոխելու, մարդկանց կյանքը փոխելու հզոր ներուժ», - ասում է պրոֆեսոր Արդա ԹՈՓՈՒՋԱՆԸ

կրթության ընկալումների և մի շարք այլ հարցերի շուրջ:

«Մենք որոշեցինք մեծահասակների ոչ ֆորմալ կրթության հարցերը բերել Մանկավարժական համալսարան՝ ուսանողներին իրազեկելու համար, որպեսզի նրանք իմանան՝ ֆորմալ կրթությունից հետո էլ կա կրթվելու մեծ աշխարհ», ասաց Է. Հակոբյանը, ով ակնկալում է Մանկավարժական համալսարանի հետ շարունակական համագործակցություն մեծահասակների կրթության տարբեր ասպարեզներում, այդ թվում նաև մշեց անդրագոգիկան կամ մեծահասակների կրթությունը որպես ավելի խոր մասնագիտացում դարձնելու ուղղությամբ հետագա աշխատանքը:

ՀՊՄՀ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհակալություն հայտնեց համալսարանը մեծահասակների կրթության հարցի քննարկման հարթակ դարձնելու համար և փաստեց, որ կրթական ծրագրերի բազմազանության մեջ մեծահասակների կրթության խնդիրը ամենաթույլ օղակն է և ամենաբարդ խնդիրը:

Մեծահասակների կրթության (ՄԿ) և զարգացման բնագավառում գործող Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ զրոբալ միջազգային

տարեկան 2440 հարցվող:

«Մեծահասակների կրթության կարևորությունն ու դերը ակադեմիական միջավայրում» թեմայով զեկույցում Մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արդա Թոփոսյանը նկատում է՝ համալսարանները ՄԿ-ի հիմնական դերակատարներից են, սակայն ֆորմալ կրթական համակարգից դուրս կրթական ծառայություններ մատուցելու մշակույթը մեզանում դեռևս ձևավորված չէ: «Համալսարանում, մեր ամբիոնը և նրան կից գործող մանկության հիմնախնդիրներն ուսումնասիրող լաբորատորիան մշակում են լրացուցիչ կրթական, ինչպես նաև ավագ դպրոցականների և ուսանողների կրթական տուրիզմը զարգացնելու միտված, տարեցների խնամքի, ազատ ժամանակի կազմակերպման կենտրոնի և այլ ծրագրեր: Դրանց իրականացումն ու կիրառումը կնպաստի բուհի՝ հանրությանը կրթելու և մանկավարժականացնելու սոցիալական առաքելությանը»:

Պրոֆեսորը վստահ է՝ ժամանակն է լուծել պրոֆեսիոնալ անդրագոգիկներ պատրաստելու և համապատասխան մասնագիտացում տալու խնդիրը. ՀՊՄՀ-ն ունի համապատասխան ներուժ

Մանկավարժական համալսարանում էին Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ Հայաստանում կազմակերպության ներկայացուցիչները, որոնք որպես մեծահասակների կրթության մասնագիտական կազմակերպություն՝ քաղաքացիների, կրթական կազմակերպությունների և կառավարությունների հետ համատեղ փորձում են ստեղծել շարունակական կրթության կայուն համակարգ:

Դեկտեմբերի 3-ին Մանկավարժական համալսարանում կայացավ «Մեծահասակների կրթությունը Հայաստանում» քանակական հետազոտության արդյունքների ներկայացումն ու քննարկումը:

Պատվիրատու ընկերության Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի տնօրեն Էսթեր Հակոբյանի ղեկավարած կառույցը ֆինանսավորվում է Գերմանիայի կողմից, այսօր այն միջազգային լայն ընդգրկում ունի և գործում է աշխարհի 40 երկրներում:

«Կառույցը զբաղվում է մեծահասակների կրթության հարցերով», -ասում է Է. Հակոբյանը՝ ընդգծելով, որ մեծահասակներ ասելով նկատի չունեն տարեցներին, այլ չափահաս մարդկանց, որոնք ֆորմալ (նախակրթարան, դպրոց, բուհ) կրթությունից հետո ուզում են ինքնակրթվել կամ զարգանալ ու շարունակել կրթությունը:

Կառույցի ղեկավարն ասում է, որ Հայաստանում ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ վիճակագրական տեղեկություններ չկան և 2020-2021 թվականներին իրենք իրականացրել են հետազոտություններ՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ

ԵՐԿԼԵԶՎՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԱՆՀԵՐՔԵԼԻ ՓԱՍՏ Է

Մանկավարժական համալսարանում դեկտեմբերի 13-ին մեկնարկեցին «Երկլեզու համալսարանական հարթակի կազմակերպման փորձ» խորագրով մեթոդական դպրոցի աշխատանքները:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Ստավրոպոլի պետական մանկավարժական ինստիտուտի համատեղ միջոցառմանը ներկա էին դասախոսներ, ուսանողներ, տարբեր հաստատությունների՝ լեզվի պահպանման խնդիրներով զբաղվող մասնագետներ:

Ներկաներին ողջունեց Ստավրոպոլի պետական մանկավարժական ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների և նորարարությունների գծով պրոռեկտոր, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մաքսիմ Կուլեշինը՝ ասելով, որ հպարտ է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում հյուրընկալվելու համար:

«Մեր ֆորումը նվիրված է ռուսաց և մայրենի լեզուների առաջընթացին, նոր մեթոդների ներդրմանը ռուսաց և մայրենի լեզուների բովանդակության մեջ: Ինչու է պետք լեզուների իմացությունը, որպեսզի, առաջին հերթին, բացենք սահմանները ժողովուրդների, երկրների միջև, որպեսզի ազատ ճանփորդենք, որպեսզի բնագրով կարողանանք համաշխարհային դասականներին... Դժվար հարց



է՝ ինչ լեզու սովորել:

Մեր նախագծի նպատակն է մանկավարժականի ուսանողներին և դասավանդողներին ծանոթացնել ռուսաց լեզվի առաջնահատկություններին և մշակույթին, ռուսաց լեզվին ընդհանրապես: Ֆորումի շրջանակներում պլանավորել ենք անցկացնել միջոցառումներ՝ վարպետության դասեր և օլիմպիադա՝ «Ես գիտեմ ռուսաց լեզուն»: Երկրների միջև ման կենդանի հանդիպումների համատեքստում են ծնվում տարբեր մախաբություն, որոնք խթանում են լեզուների իմացությանը», -ամփոփեց բանախոսը:

Նա հուշանվերներ հանձնեց ՀՊՄՀ ղեկավարին, իսկ ներկաներին մաղթեց արդյունավետ աշխատանք:

Մանկավարժական համալսարանի ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսորի պաշտոնակատար Նաիրա Դալյանը ողջունեց ներկաներին՝ կարևորելով սեմինարի քննարկման թեման, ասելով, որ Մանկավարժական համալսարանի գլխավոր գիտական թեմաները մշտապես եղել են կրթության և կրթված

մարդու հիմնախնդիրները:

Ամբիոնի վարիչը փաստեց՝ մեր ժամանակներում լեզվական սահմաններն ընդարձակվում են, և եթե 20-րդ դարի սկզբին երկլեզվյան ուսուցումը համարվում էր արգելք, ապա հիմա դրա առավելություններն անհերքելի են:

«Հատկապես հաճելի է մեզ համար երկլեզվյան կրթության մասին խոսելը, որովհետև երկլեզվյան կրթության հայեցակարգը տարիներ առաջ մշակվել է մեր ամբիոնում՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բելլա Եսաջանյանի կողմից, նրա կողմից մշակվել է նաև հայկական դպրոցներում ռուսաց լեզվի խորացված ուսուցման հայեցակարգը:

Հուսով եմ, որ աշխատաժողովը հնարավորություն կընձեռի ավելի իմանալ հետագա կառուցողական երկխոսության հիմքի վրա, այն հարցերը, որոնց մասին կխոսենք այս ընթացքում, իրենց արտահայտությունը կգտնեն մեր հետագա պրակտիկ գործունեության մեջ», -ասաց Ն. Դալյանը:

ՀՊՄՀ ղեկավորի պաշտոնակատար, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խոնջյանը ողջունեց աշխատաժողովի մասնակիցներին, Ստավրոպոլի պետական մանկավարժական համալսարանի «Երկլեզու համալսարանական հարթակի կազմակերպման փորձ»-ի ներկա- ➤4



ԵՐԿԼԵԶՎՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ...

յացուցիչներին:
 >3 «Ժամանակակից աշխարհում մեծանում է կրթության և գիտության դերը: Բոլոր ժամանակներում համալսարանները խորհրդանշել են մշակույթի և գիտության բարձր մակարդակ և, սոցիալական փոխգործակցային համաձայնվածությամբ, լուսավորչական դեր են կատարել.-ասաց ռեկտորը: - Եվ քանի որ այսօր խոսքը գնում է երկլեզվյան կրթության մասին, ուզում են ընդգծել, որ այն անհիշելի ժամանակներից քաղաքակրթության անբաժանելի մասն է, որի կիրառման մասին մեր ժամանակներում սկսեցին քննակել անցյալ դարի 60-ական թվականներից»:

Ա. Խոնեցյանն ասաց, որ Հայաստանում երկլեզվյան ուսուցման հայեցակարգը մշակվել է մեր համալսարանի ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից: Կարևորագրքի ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

լով երկլեզվյան ուսուցումը մարդու մտավոր և անհատականության ձևավորման ու զարգացման գործում՝ նա ընդգծեց երկլեզվյան ուսուցման մանկավարժական նշանակությունը: Ռեկտորի պաշտոնակատարը նաև շեշտադրեց, որ այսօրվա սովորողը, ուսանողը պետք է կարողանա տիրապետել առնվազն երկու կամ ավելի լեզուների, որպեսզի կարողանան օգտվել հասարակական շփման տարբեր միջոցներից, որն ապահովում է բազմաշակութային անհատի ձևավորումը:

Ռեկտորի պաշտոնակատարը նկատեց՝ եթե հարցը դիտարկենք մշակութաբանության տեսանկյունից, կարելի է կրկին հիշեցնել, որ նոր ժամանակների յուրաքանչյուր մշակույթ բաց համակարգ է, իսկ եթե փակ է՝ ազգը կդադարի գոյություն ունենալ:

Ամփոփելով՝ Ա. Խոնեցյանը բարձրա-

ծայնեց, որ երկլեզվյան ուսուցումն իր նկատմամբ մեծ ուշադրություն և հոգածություն է պահանջում, լայն ներդրում և հետազոտություններ են պահանջում:

Ռեկտորի պաշտոնակատարը հույս հայտնեց, որ սեմինար-աշխատաժողովը մտքերի փոխանակման և երկլեզվյան ուսուցման խնդիրների քննարկման լայն հարթակ կդառնա:

Ստավրոպոլի պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր, Ալեքսանդր Ֆոկինն իր զեկույցում անդրադարձավ մայրենի լեզվի պահպանման խնդիրներին և հավելեց՝ յուրաքանչյուր շաբաթ անվերադարձ մի մայրենի լեզու է վերանում: Պրոֆեսորը ներկա և ապագա մանկավարժներին կոչ արեց գտնել անհրաժեշտ լուծումներ մայրենի լեզուն պահպանելու համար՝ ելնելով այն իրողությունից, որ շատ հաճախ միջին դասարանների դպրոցականները հրաժարվում են կարդալ կամ գրել մայ-

րենի լեզվով. «Աշակերտները և ուսանողները մեծ ուշադրություն են դարձնում միջազգային լեզուներին, մասնավորապես՝ անգլերենին: Մեծ արագությամբ ստեղծվում են գրքեր, մշակվում լեզուն սովորեցնելու երաշխավորված մեթոդիկաներ, ինչի արդյունքում նույն արագությամբ կորցնում ենք յուրաքանչյուրս մեր մայրենին»,-նշեց պրոֆեսոր Ֆոկինն ու վստահեցրեց՝ մայրենին է գոյության երաշխավորը՝ չկա լեզու՝ չկա ազգություն:

Աշխատաժողովը շարունակվեց Ստավրոպոլի պետական մանկավարժական համալսարանի ներկայացուցիչների զեկույցներով, փորձի փոխանակմամբ և քննարկումներով: Ռուս գործընկերներն անցկացրին նաև ռուսաց լեզվի ուսուցման վերաբերյալ վարպետաց դասեր, ապա ներկայացրին մասնակցեցին «Ես գիտեմ ռուսերեն» խորագրով օլիմպիադային:

Սիլվա ԱՄՐՅԱՆ

ՔՐՏՆԱԶԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԿՈՒՏԱԿՈՒՄԻ ԱՐԳԱՄԻՔԸ



ինչ ձևավորվում է Ձեր երևակայության սահմաններում»,- եզրափակեց պրոֆ. Սրբուհի Գևորգյանը՝ դիմելով գրքի հեղինակին:

Ուսումնական բառարանի գաղափարը տվել է գրքի խմբագիրը՝ Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը, ով ներկայացրեց գրքի կառուցվածքն ու խնդիրները՝ միաժամանակ, որպես հետաքրքրական ու ընդգրկուն բաժին, առանձնացնելով բառարանագիտությունը, որտեղ հիշատակվում են մի քանի տասնյակ բառարաններ, նաև այնպիսիք, որոնք չկան հայ իրականության մեջ: Դ. Գյուրջինյանն ընդգծեց, որ ներկա բառարանը երկար տարիների քրտնաջան աշխատանքի և կրուտակումի արգասիք է. նա նկատեց նաև, որ պրոֆեսորը կարողանում է համագործակցել մասնագետների հետ, լսել, ընդունել

ռուցվածքով և գիտական արժանիքներով չի գիշում նախորդներին»,- ասաց ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, դոցենտ Վարդան Պետրոսյանը՝ Լ. Խաչատրյանի գիտական կենսագրության մեջ նոր բառարանը համարելով շրջադարձային:

Լալիկ Խաչատրյանի համակուրսեցի Վրեժ Սարուխանյանն անդրադարձ արեց ուսանողական տարիներին. հիշեց՝ դեռ 52 տարի առաջ իրենք Լ.Խաչատրյանին կնքել էին «պրոֆեսոր» անունով:

Պրոֆեսորի նախկին ուսանող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Քնարիկ Աբրահամյանն ուսումնական բառարանը կարևորեց նաև հայագիտության տեսանկյունից, իսկ բանասիրական ֆակուլտետի մագիստրոս Լիլիթ Դանիելյանը հավելեց՝ «Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան»-ը համակարգված ձևով ներկայացնում է լեզվաբանական գիտության առանցքային հարցերը և մեծապես կարող է մագիստրի ինչպես հայագիտական, այնպես էլ լեզվաբանական առարկաների յուրացմանը:

Լալիկ Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց իր աշխատանքը գնահատելու, արժևորելու համար՝ նկատելով, որ այդ դեպքում գիտնականն իրեն բավարարված է գգուն:

«Լեզվի ցանկացած հարցին մվիրված իմ աշխատանքները հենվում են երկու հիմքի վրա՝ գրաբարի և լեզվաբանության. գրաբարը տալիս է լեզվական ատաղձը՝ հիմքը, իսկ լեզվաբանությունը՝ մեթոդաբանությունը: Այս երկուսի համագործակցումը դառնում է այն բանալին, որ կարողանում է բացել լեզվական դրամի ցանկացած դուռ»,- ասաց պրոֆեսորը: Լեզվի նկատմամբ հոգածությունը գիտական հիմքերի վրա դրվեց Մխիթար Սեբաստացու կողմից և այդպես շարունակվեց: Մխիթարյաններից միջև այսօրվա Լեզվի կոմիտեի բոլորս լծված ենք մեր լեզվի անադարտությունը պահելու գործին. այդ ուղղությամբ զգալի աշխատանք ունեն նաև մասնագիտական ամբիոնները»:

Պրոֆեսորը հիշեցրեց, որ Ֆրանսիայի ակադեմիան կոչված է ֆրանսերենի պահպանմանը, ավելի վաղ, Դոմենական սենատում ոճաբանն ուղղում էր անգամ կայսերը: Այդպես էլ մենք պիտի վերաբերվենք մեր լեզվին: Մենք անում ենք այն, ինչի շնորհիվ մեզ տրված է: Մեր լեզվաբանության հետազոտությունների լաբորատորիան շատ ծրագրեր ու անելիքներ ունի առաջիկայում:

Պրոֆ. Լ.Խաչատրյանը խորին շնորհակալություն հայտնեց բուհի գիտական գրադարանի տնօրենությանը, բոլոր ելույթ ունեցողներին և հյուրերին, որոնք իրենց ներկայությամբ յուրաքանաչափ շուրջ հաղորդեցին հանդիսարանը:

«Շատ անվանի լեզվաբանների են լսել, բայց այսօրվա մեր լեզվի ինստիտուցիոնալ կրողները մեկը գիտնական Լալիկ Խաչատրյանն է»,- այսպես բացեց լեզվաբան Լալիկ Խաչատրյանի «Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարանի» շնորհանդեսը ԳՊՄՀ գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանը:

«Լսարանում այսքան արժանապատիվ մարդկանց ներկայությունը խոսում է մեր համալսարանի գիտական եռուզեռի մասին: Մեր իրականության մեջ պատմականորեն ամրապնդվել է՝ մարդուն զննահատել տարիներ անց և նրա երախտիքն այդպես ներկայացնել ապագա սերունդներին: Ես կարծում եմ՝ մեր պարտքն է այսօր մեր կողքին ապրող, արարող մարդկանց գնահատել, մեծարել և ցույց տալ գալիք սերունդներին, որոնք էլ շարունակաբար այդ գործընթացը պետք է դարձնեն ժամանակի մեջ իր բովանդակությունը չկորցնող կարևորագույն խնդիր»,-ասաց համալսարանի ռեկտորի պաշտոնակատար, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խոնեցյանը:

«Մեր հարգարժան պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանը վաղուց կայացած գիտնական է, և նրա ստեղծագործական արդյունքը բուհի արդյունքն է, գիտության, կրթության արդյունքն է: Մենք այս երևույթը պետք է դարձնենք շարունակական, մեր ցանկացած երախտավորի, որն իր հետքն է թողնում գիտության և կրթության մեջ, պետք է գնահատենք հենց այս պահին և դաստիարակչական մեծ նշանակություն տանք ներկայիս սերնդի՝ երախտավորների գործի հանդեպ վերաբերմունքի կարևորագույն



գործում»,- ամփոփեց Ա. Խոնեցյանը՝ գիտնականին մաղթելով շարունակական բեղմնավոր գրիչ:

Պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը ողջունեց «Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարանի» ծնունդը, որը բուհում գործող Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի հերթական աշխատանքն է: Նա խոսեց Լ. Խաչատրյանի աշխատանքի ծավալի, որակի, բնույթի, մոտեցումների, նորարարական մեթոդների, դպրոցական և բուհական համակարգերում հայագիտության տարբեր հարցերի մեկնաբանությունների մասին. «Ինձ ամեն անգամ զարմացնում է ոչ միայն Լալիկ Խաչատրյանի եռանդը, այլև այն ձգտումը, որով նա կարողանում է հայագիտության առանցքային հարցերը ներկայացնել լեզվաբանության խնդիրների համատեքստում: Ինձ համար հաճելի է, որ նրա գիրքը մեծ հետաքրքրություն է առաջացնում գիտաչափական շտեմարանում»:

«Թող որ կյանքի կոչվի այն ամենը,

նրանց տեսակետները, հակադրվել. սա ևս կարևոր հատկանիշ է գիտական կյանքում: Դրա հետևանքն այն է, որ պրոֆ. Լ.Խաչատրյանը համահեղինակությամբ հրատարակել է դպրոցական և բուհական դասագրքեր:

«Կրթություն» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Գագիկ Մինասյանը «Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարանը» կոթողային աշխատություն համարեց, գրքի գրախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաղարշակ Մադոյանն էլ նկատեց՝ գրքին հավելյալ արժեք է հաղորդում այն, որ նրա հիմքում դրված են ժամանակակից մեթոդներ. հեղինակն ընտրել է այն, ինչ օգտակար է գործածելի. «Ազգային լեզու ստեղծում են ոչ թե բաժանելով, այլ միացնելով, որով էլ առաջնորդվել է ուսումնական և գիտական ձեռնարկի հեղինակը»:

«Երկար տարիների քրտնաջան աշխատանքի շնորհիվ Լալիկ Խաչատրյանին հաջողվել է ստեղծել մնաց ձեռնարկ, որը մյուսներից տարբերվում է իր կա-



Վերապատրաստման արդյունքների ամփոփում

Մանկավարժական համալսարանում ամիսների համագործակցության արդյունքում կազմակերպվեց համարակրթական հիմնարկների վերապատրաստումներ իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական աստատավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումը: Վերապատրաստվեցին աշխարհագրության, կենսաբանության, հայոց լեզվի, հայոց պատմության, հասարակագիտության, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի, քիմիայի, անգլերենի, ռուսերենի, ֆիզիկայի և տարրական դասարանների 111 ուսուցիչներ՝ հիմնականում Երևանի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի և Լոռու մարզերից:

Վերապատրաստումն իրականացնող աշխատանքային խումբը՝ ծրագրերի պատասխանատու պրոռեկտոր Սրբուհի Գևորգյան, ծրագրի ղեկավար Արթուր Թադևոսյան, ծրագրի համակարգողներ Քնարիկ Յուզհանյան և Մելանյա Բարսեղյան, օպերատոր Երանուհի Չարությունյան, սեպտեմբերի 13-ից մինչև նոյեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում պատշաճ մակարդակով և բարձր պատասխանատվությամբ իրականացրեց ուսուցիչների 110 ժամ տևողությամբ վերապատրաստումը:

Դեկտեմբերի 6-ին Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ ուսուցիչների հավաստագրերի



հանձնումը:

«Վերապատրաստման գործընթացը ուսումնական գործընթացի և նրա հետագա զարգացումների կարևոր բաղադրիչն է,- ողջունելով ուսուցիչներին՝ ասաց ԴՊՄՀ ղեկավարի պաշտոնակատար Աշոտ Խոնջյանը: -Համոզված եմ, որ բոլորը ինչ-որ չափով կատարելագործվեցին, նոր գիտելիքներ ձեռք բերեցին վերապատրաստումների ընթացքում: Մեզ հետ կարող եք փոխհարաբերությունները շարունակական դարձնել և մշտապես ակնկալել մեր աջակցությունը»:

ՀԻՇԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ



նիմական (Գյումրի) քաղաքում:

Ելնելով գիտելիքի հարստացման և պատմության բնագավառի նկատմամբ ունեցած հետաքրքրությունից՝ ավարտել է Միքայել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության, իսկ այնուհետև Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի ռուսագերմանական ֆակուլտետները: Շարունակելով կրթությունը՝ 1954 թ. ընդունվել է Հայաստանի ԳԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտուրա: Պատմության աշխարհը ավելի խորը ուսումնասիրելու ցանկությունը նրան տարավ Լենինգրադի համալսարանի արևելագիտության ֆակուլտետ, որտեղ էլ գիտական մասնագիտացումը ստացավ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու

1975 թ., իսկ 1982 թ.՝ պրոֆեսորի կոչմանը:

1988 թ. սկսած նա ղեկավարել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (նախկինում՝ ինստիտուտ) ընդհանուր պատմության ամբիոնը: 1990 թվականից թղթակից անդամ է եղել, իսկ 1996 թ.՝ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի անդամ:

Դասախոսել է Երևանի տարբեր բուհերում: Նա ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի մասնագիտական խորհրդի անդամ էր, Հայաստանի և Օսմանյան կայսրության միջին դարերի պատմության ու աղբյուրագիտության վերաբերյալ բազմաթիվ աշխատությունների հեղինակ: Հեղինակել է նաև 1995 թ. լույս տեսած «Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր)» գիրքը: Մանվել Զուլայանը հրատարակել է «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI-XVII դարերի Կանունամներ)» աշխատությունը (1964 թ.):

1970 թ. Մ. Զուլայանը ռուսերեն հրատարակել է «Հայաստանի Հին և միջնադարյան պատմության հարցերի ժամանակակից թուրքական պատմագիտության լուսաբանմանը» ուսումնասիրությունը, որը հետագայում հարստացվել է նոր նյութերով և հրատարակվել նաև հայերեն (Երևան, 1995):

1971 թ. Մոսկվայում ռուսերեն հրատարակվել է Մ. Զուլայանի «Հայաստանը XVI դարի առաջին կեսին» աշխատությունը՝ հանդիսանալով որպես դոկտորական թեզ (1974 թ.): 1980 թ. հրատարակել է «Արևմտյան Հայաստանը XVI-XVII դարերում» աշխատությունը:

Մ. Զուլայանը հրավիրվել է մասնակցելու թուրք հայտնի հեղինակ Էվլիյա Ջեյբու ուղեգրության՝ «Սեյահեթ-նամեի»՝ Մոսկվայում բազմաօրյա ռուսերեն թարգմանության իրականացմանը, որը և հրատարակվել է 1983 թ.:

Մ. Զուլայանի մասնակցությունը մեծապես նպաստել է ռուսալեզու ընթերցողներին Հայաստանի մասին թուրք հեղինակի տեղեկությունների ճշմարտացի ներկայացմանը: Մ. Զուլայանը 1990 թ. գրել է «Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների (XIII-XVIII դարեր)» աշխատության առաջին գիրքը, որն էլ արժեքավոր է և՛ պատմագիտական, և՛ աղբյուրագիտական առումով:

Պատմաբանը 2011 թ. պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով: Մահացել է Երևանում 2012 թ. հունվարի 19-ին:

Կարինե ՍՈՂՈՍՆՅԱՆ
ԴՊՄՀ պատմության քանդաքանի գիտաշխատող

ՄԱՆՎԵԼ ԿԱՐԱՊԵՏԻ ԶՈՒԼԱՅԱՆ

Հայ գրող, արևելագետ, պատմության ոլորտի կարկառուն ներկայացուցիչներից է Մանվել Կարապետի Զուլայանը: Նա ծնվել է 1929 թ. դեկտեմբերի 30-ին, Սիրիայի Հալեպ քաղաքում: 1947 թվականն էր, երբ հայրենիք վերադառնալու և հաստատվելու նպատակով ընտանիքի հետ ներգաղթել է Հայաստան և բնակություն հաստատել Լե-

ղեկավարությամբ:

Զուլայանը տիրապետում էր թուրքերենի և այլ օտար լեզուների, որն էլ թույլ տվեց նրան ձեռնամուխ լինել Արևմտյան Հայաստանի ու միջնադարի պատմության ուսումնասիրման գործին:

Մ. Զուլայանը պատմական գիտությունների դոկտորի աստիճանին արժանացել է

ԲԱՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ



քենագիր 11 էջանոց իմ զեկուցումը: Ծափահարություններ, և Գյուլնազարյանի խոսքը (չմտածեք, թե մեծամտամուն եմ, նա տառաջցիդեմ հենց այդպես էլ ասաց):

Իմ գրքերը հայտնի գրականագետների կողմից գրախոսելու առիթներ շատ են եղել, շատ գրախոսողներ են ունեցել, ինձ, որպես գրողի, բնութագրումներ էլ շատ են եղել, բայց խոստովանեմ՝ այսքան անմիջական, այսքան անկեղծ խոսք և այսքան դիպուկ բնութագրում, գրքիս էությունն այսպես ճշմարիտ ներկայացնող խոսք առա-

ջին անգամ եմ լսում: Ես շատ հուզված եմ և շատ զգացված:

Եվ հուզված գրողը համբուրեց ամբիոնի նոտ կանգնած, գրողից տասնամյա տիկ հուզված զեկուցողիս: Աշխարհն ինձ էին տվել-առաջին լուրջ քայլ, ջերմ գովեստներ: Ո՞նց եմ ափսոսում, որ մեքենագիր այդ առաջին գրախոսական չի պահպանվել: ...Հիմա Խաժակ Գյուլնազարյանն արդեն 100 տարեկանի սահմանն անցել է, և Երկնային հեռուներից, գուցե թե, նրա հոգին զգում է իմ այսօրվա զգացումը, տես-

նում է այս վերհուշից եկած իմ շիկնելը, իմ այսօրվա ջերմությունն իր համրեպ, որ բարի հիշողություն է, գեղեցիկ տպավորությունների արտահայտում: Գուցե տեսավ նա, որ ես նույն հուզմունքով իմ խոսքն ասացի իր ծննդյան 100-ամյակին, որ կազմակերպվել էր Ավ. Իսահակյանի անվան գրադարանի մասնաճյուղ՝ Խաժակ Գյուլնազարյանի անվան գրադարանում: Ես այնտեղ մի քիչ ավելի մանրամասնեցի գրողի հանդեպ ունեցած իմ վերաբերմունքը, իմ խորին սերն ու հարգանքը, նաև հպարտությունս, որ հետագայում նա ինձ ընդունում էր որպես իր մտերմ: Այդ մտերմության արդյունքում էր, որ ես մի քիչ երես էի առել և մի օր գրողների տանը բռնացրի գրողին ու նրան դեմ արեցի հարցերի իմ ծոցատետրը:

-Ես սա թողնեմ Ձեզ, պատասխանեք խնդրեմ և ասացեք, թե ե՞րբ գամ վերցնելու:

-Հիմա չի՞ կարելի-ժպտաց, գրիչ ուզեց և հարցերի արանքում թողած ազատ տողերը լրացրեց իր գեղեցիկ ձեռագրով:

Դրանցից միայն մեկն էմ հիմա ներկայացնում լուսանկարով:

Խաժակ Գյուլնազարյանի հետ մեր մտերմությունը հետո երկար շարունակվեց, և իմ Խաժակ որդու անունն էլ մեր այդ մտերմության արդյունքն էր:

Հովհաննես ԴԱՊԻԿՅԱՆ
ԴՊՄՀ շրջանավարտ



հեց «Տարվա լավագույն լոգոպեդ» մրցանակը...

2016 թվականի քառօրյա պատերազմի ընթացքում ես սկսեցի իմ մասնագիտական առաքելությունը՝ ծառայություններ մատուցել, սկսեցի աշխատել Զերացու համալսարանական պոլիկլինիկայի նյարդավիրաբուժական բաժանմունք ընդունված ներգաճագուղեղային վիրավորում ստացած զինվորների հետ: Աշխատել եմ կանավորական սկզբունքով: 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո ներգրավված եմ եղել այս ամբողջ գործընթացին թե՛ Զերացի համալսարանական պոլիկլինիկայում, թե՛ «Աստղիկ» բժշկական կենտրոնում, որտեղ նույնպես աշխատում էի վիրավորված զինվորների հետ, համատեղ մաս Զինվորի տանը՝ որպես լոգոպեդ:

Կարծում եմ գնահատվեց իմ ներդրումն ու մասնագիտական ծառայությունները նվիրումով կատարելը, թիմային աշխատանքին նվիրվելը:

- Դավա՛ր չէր արդյոք պատերազմական

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԼՈԳՈՊԵԴԸ

Մերի Շաբոյանը Հատուկ և Ներառական կրթության ֆակուլտետի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դասախոս է, 2012 թվականից աշխատում է «Շերացի» թիվ 1 համալսարանական պոլիկլինիկայի նյարդավիրաբուժական բաժանմունքում՝ որպես լոգոպեդ: Աշխատում է գլխուղեղի կաթված ստացած հիվանդների հետ, որոնց մոտ առաջացել է խոսքի խանգարում:

Մերի Շաբոյանը մշտապես աշխատում է իր մասնագիտական գիտելիքների զարգացման ուղղությամբ, մասնակցում վերապատրաստումների, գիտաժողովների, սեմինարների, հաճախ է ինքն է կազմակերպում:

Մ. Շաբոյանը բնութագրվում է որպես համեստ, բարեխիղճ, պարտաճանաչ, պատասխանատու, նպատակալաց, աշխատասեր, ազնիվ և հոգատար անձնավորություն: Անգնահատելի են նրա կատարած բարեգործությունները «Բարի Տեսակ», TMM-ում, որտեղ իրականացնում է վերապատրաստումներ և ողջ գումարը տրամադրում այդ հաստատություններում թերապիաներ ստացող երեխաների համար նախատեսվող ծախսերին:

Մ. Շաբոյանը 2016թ.-ի ապրիլյան պատերազմից հետո կամավորական սկզբունքով աշխատել է վիրավորում ստացած զինվորների հետ, ու մինչ օրս շարունակում է իր մասնագիտական աջակցությունը ցուցաբերել «Զինվորի տուն վերականգնողական կենտրոն»-ում գանգուղեղային վիրավորում ստացած զինվորներին:

- Կպատմե՞ք Ձեր մասին:

Մասնագիտությունն պատահական եմ ընտրել՝ կարծելով, թե այն բժշկական մասնագիտություն է: Բայց ես գիտեմ՝ կյանքում ոչինչ պատահական չի լինում, անգամ պատահականությունները պատահական չեն, ես հայտնվեցի այս ոլորտում, որտեղ պետք է ունենայի իմ ներդրումը:

Առաջին կուրսում ես հասկացա, որ ընտրել եմ մանկավարժական ճյուղ: Միշտ սիրել եմ բժշկությունը, հոգեբանությունը և ենթագիտակցորեն ընտրել եմ այն մասնագիտությունը, որը սերտորեն կապված է այդ գիտությունների հետ:

Ավարտել եմ Դեֆեկտոլոգիայի ֆակուլտետը, այնուհետև մագիստրատուրայում որպես նեղ մասնագիտություն՝ ընտրել եմ լոգոպեդիան: Նեղ մասնագիտությունների ընտրության հարցի շուրջ շատ մտորեցի, բայց հասկացա, որ ես հոգով, սրտով լոգոպեդ եմ: Սիրում եմ իմ մասնագիտությունը և ամեն օր ավելի եմ սիրահարվում իմ մասնագիտությանը:

- Ովքե՞ր են ձեր խաղացել Ձեր մասնագիտական կայացման գործում:

Առաջին քայլերս արել եմ ժամանա Պայլությանի ղեկավարությամբ, ով ինձ սովորեցրել է լոգոպեդիայի այբուբենը: Մագիստրոսական թեզիս ղեկավարը թեկնածու, դոցենտ Գոհար Յուսյանն է եղել, իսկ ատենախոսական աշխատանքիս գիտական ղեկավարը պրոֆեսոր Սիրանուշ Կարապետյանն է:

Նախնական պաշտպանությունն անցել եմ, պատրաստվում եմ հրապարակային պաշտպանությանը:

- Վերջերս երևանում անցկացվեց AAD-ի՝ Հայաստան-Արցախ-Սփյուռք 12-րդ ամենամյա մրցանակաբաշխությունը (մրցանակաբաշխության հիմնադիր «Եռամիասնություն հանուն զարգացման») հ/կ նախագահ Մամիկոն Խուրշուդյան, որը Ձեզ շնոր-



Ժամանակահատվածում նման ծանր գործունեությունը:

Իհարկե, շատ բարդ էր ժամանակահատվածը: Աշխատանքը սկսել եմ վերակենդանացման բաժանմունքից զինվորների հետ, որոնք արդեն ձևավորված խոսքի կորուստ ունեին: Ինչպիսի զգացողություններ ու պարուններ եմ ունեցել, երբ նրանք արտաբերել են բառեր, այդպես մայրն է ուրախանում երեխայի առաջին թոթովանքը լսելիս: Ես նման զգացողություններ եմ ունեցել: Աշխատանքի ճիշտ կազմակերպման արդյունքը նկատելի էր, որովհետև միայն իմ աշխատանքը չէր, վիրավորում ստացած տղաների հետ մասնագիտական թիմ էր աշխատում, կատարելով համալիր աշխատանք: Աշխատանքը դեռ շարունակվում է:

- Ձեզ հաջողվե՞լ է տեսական գիտելիքները հաջողությամբ կիրառել պրակտիկ դաշտում. ինչպե՞ս եք համատեղում:

Շատ կարևոր է տեսական գիտելիքները համատեղել գործնականի հետ, որի դեպքում գիտելիքները դառնում են լիարժեք: Իհարկե, տեսական գիտելիքները կիրառելը մեծ հմտություն է և պահանջում, բայց տալիս է փորձառություն, որը շատ է օգնում աշխատանքում: Յուրաքանչյուր հիվանդի հետ աշխատելը առանձնահատուկ, անհատական մոտեցում է պահանջում, որովհետև ասպրինումը տարբեր զարգացումներ է ունենում: Յուրաքանչյուր խնդիր թեզ սովորեցնում է դրանից բխող այլ խնդիրների ու բուն ժամանակ տարբերակների մասին: Ինչպիսի հույզեր ու ապրումներ եմ ունեցել, երբեմն լրիվ ուժասպառ եղել, բայց ուժ եմ գտել և զինվորի նման նորից վերադարձել շարք:

- Ի՞նչ կմտաբերեք ապագա լոգոպեդներին: Ինչո՞ւ ընտրել այդ մասնագիտությունը:

Իրականում ես շատ եմ սիրում իմ մասնագիտությունը: Երիտասարդներին էլ խորհուրդ եմ տալիս՝ եթե դեռ չեն կողմնորոշվել մասնագիտական ընտրության հարցում, ընտրեն լոգոպեդի մասնագիտությունը: Այն շատ մարդասիրական մասնագիտություն է, որը շատ ջանքեր է պահանջում: Հեշտ չէ, ավելի՛ն՝ դժվար է այն ճանապարհը, որն անցնում ես, բայց երբ տեսնում ես խնդիրը հաղթահարել ես, ծնողների գոհունակությամբ լի աչքերը, վարձատրված ես զգում: Շատ արդիական մասնագիտություն է մեր ժամանակներում և, ամենայն անհիմն ինչից, պետք է սիրել մասնագիտությունը: Եթե չսիրես մասնագիտությունը՝ լավ մասնագետ չես դառնա: Մեր ուսանողներին՝ մեր ապագա լոգոպեդներին հորդորում եմ սիրեն իրենց մասնագիտությունը:

Զրույցը Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Ռուս պոետները՝ Հայաստանին



Ժողովուրդների, ազգությունների բարեկամությունն իրականացվում է նախ և առաջ մշակութային երկխոսությամբ: Սա պարզ իրողություն է, իրար ձեռք մեկնելու չափ բարի իրողություն:

Մանկավարժական համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնը դեկտեմբերի 16-ին կազմակերպել էր գրական-երաժշտական միջոցառում՝ «Ռուս պոետները Հայաստանի մասին» խորագրով: Միջոցառմանը մասնակցում էին ոչ միայն Օտար լեզուների, այլև համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողներ:

Ի դեպ, օրեր առաջ Մոսկվայի տունը կազմակերպել էր «Ռուս պոետները Հայաստանի մասին» խորագրով մրցույթ, որին մասնակցում էր 90 ուսանող հայաստանյան բուհերից, և եզրափակիչ փուլում 11 հոգուց մրցանակային տեղեր զբաղեցրին մեր բուհի Օտար լեզուների ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողուհի Ռինա Յուլիանյանը և Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Սիրուշո Յովհաննիսյանը:



Միջոցառումն սկսեցին Բուլատ Օկուլչավայի երգերից մեկի կատարմամբ, ապա ուսանողները ռուսերեն լեզվով ներկայացրին Հայաստանի և հայ ժողովրդի մասին ռուս հայտնի բանաստեղծների ստեղծագործություններից: Ծրագրում ընդգրկել էին Սերգեյ Գորոդեցկու, Վալերի Բրյուսովի, Մարիետա Շահինյանի, Օսիպ Մանդելշտամի, Վասիլի Դատչենկոյի, Գրիգորի Կորենի, Միխայիլ Մատուսովսկու, Արսենի Տարկովսկու, Վերա Ջվազինցայի, Նիկոլայ Տիխոնովի, Սերգեյ Բուլիչևի, Մարիա Պետրովիչի և այլ տաղանդավոր պոետների բանաստեղծություններ: Որքան ջերմություն ու սեր կար այդ բանաստեղծություններում Հայաստանի ու հայ ժողովրդի դարավոր պատմության, մաքառումների, մշակույթի, գեղեցիկ պատմությունների ու հրաշալի բնաշխարհի մասին:

Ուսանողների ասմունքում հուզմունքն ու հպարտությունը միախառնվել էին իրար, թախիծով համակել Պուշկինի ինստիտուտի հյուրընկալ լսարանում ներկա գտնվողներին:

Միջոցառումը համեմատել էր երաժշտական կատարումներով՝ կիթառ, դուդուկ, քամանչա... Վերջին երաժշտական գործիքով ուսանողը հրաշալի ծայրով կատարեց Սայաթ-Նովայի երգերից: Ուսանողները կատարեցին նաև Կոմիտասի անգլոգական «Հորովելն» ու «Կռունկը»՝ ներկաներին հիշեցնելով Կոմիտասի խոսքերը: «Սիրեցեք զիրար, շատ սիրեցեք, որպեսզի ապրեք», ինչը այսօր մեր ժողովրդին շատ է պետք:

«Ով եղել է Հայաստանում, միշտ նրա հետ է», «Հայաստան՝ իմ կյանքի սերը», «Հայերը մեր և ամբողջ աշխարհի ուշադրության արժանանալու մեծ իրավունք ունեն իրենց այն մշակույթով, որ ստեղծել է հայ ժողովուրդը երկար դարերի իր ինքնուրույն գոյության ընթացքում», սրանք սոսկ խոսքեր չեն, սրանք Հայաստանը և հայ ժողովրդի պատմությունն իմացող ու արժեքները գնահատող մտավորականների խոսքեր են:

Ուսանողներն անդրադարձան նաև մերօրյա պատերազմի զոհերին, հուզվեցին ու հուզեցին ներկաներին: Նաև բանաձևեցին՝ պետք է ապրել ամեն գնով:

Միջոցառմանը մասնակցում էին Ստավրոպոլի պետական մանկավարժական համալսարանի դասախոսները, որոնք ելույթներում չկարողացան թաքցնել իրենց հիացումները, նաև հուշանվերներ տվեցին հայ ուսանողներին:

Միջոցառումն ամփոփեց ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանը: «Հայաստանը և հայ ժողովուրդը շատ են տառապել, բայց միշտ վերածնվել են: Սա այն երկիրն է, որը հնարավոր չէ չսիրել»: Նա շնորհակալություն հայտնեց ուսանողներին և կազմակերպիչներին՝ գեղեցիկ զգացողություններ պարգևելու համար, և հավաստագրեր ու գրքեր հանձնեց բոլոր մասնակիցներին:

Եվ կրկին Բ. Օկուլչավայի սրբափեցմուն, հորդորող երգով ավարտեցին: «Ի՞նչը կարող է օգնել մեզ առաջ շարժվել՝ բռնեց իրար ձեռքից, որ չկորչենք մենակ... Ուսանող ու դասախոս ձեռք ձեռքի տված՝ երգեցին՝ օրը դարձնելով տոն, մի փոքր հավատ ու հույս ներշնչելով՝ պետք է ապրել, ապրել...»

Սիլվա ԱՍՐՅԱՆ



ԱՊԱԳ-Ա ԼՐԱԳՐՈՂԻ ԷՋ

Կսկեսնք ընտանեկան միջավայրում նշել Ամանորը

Գնումներով շտապող մարդիկ, սառած ձեռքեր, ամանորյա խաղալիքներ, զարդարված եղևնիներ ու հեքիաթային լույսեր... Տարին մեկ պտույտ է արել, սա նշանակում է՝ Նոր տարի է կրկին: Տարբեր երկրներում Նոր տարին տարբեր ընկալում ունի, յուրաքանչյուրն ունի տոնի իր ընկալումը: Ոմանց համար Ամանորն ամեն ինչ նոր է- ջից սկսելու հնարավորություն է, մեկ ուրիշի համար՝ ընկերների հետ լավ ժամանակ անցկացնելու, ոմանց համար էլ՝ համեղ սնվելու ժամանակ: Տարբեր են նաև տոնելու սովորույթները: Կեսգիշերյան երեկույթ, պարային շուռ ծրագիր, հաճելի ընթրիք և կենդանի երաժշտություն՝ ահա՛ ինչպես են դիմավորում ու անցկացնում Ամանորը Միացյալ Նահանգներում:

Ոմանք հնդկահավով են նախընտրում դիմավորել տարվա զալուստը, ոմանց համար էլ դա պարզապես ճոխություն է: Կարելի է բավարարվել, օրինակ, քաղցր շի-



լայով: Կեսգիշերին դանիացիները բրնձե քաղցր շիլա են դնում ամանորյա սեղանին: Թաքցված ընկույզը կամ մուշը գտնելու դեպքում ընտանիքի ազատ աղջիկն ամուսնանալու է այդ տարում: Իսկ դուք գիտե՞ք, որ տոնական եղևնին զարդարելու ավանդույթը եկել է նորածնության երկիր Ֆրանսիայից: Ինչպես շատ քաղաքներում, Փարիզում նույնպես կա «Ամանորյա տոնավաճառ», որտեղ եղևնիները զարդարելու համար բլիթներ, տարբեր տեսակի քաղցրավենիք, խաղալիքներ ու զարդարանքներ են վաճառում:

Ամանորը Հայաստանում փոքր-ինչ այլ կերպ է տոնվում. քաղցր շիլայի փոխարեն ամանորյա խոզի փափկամիս, աղցաններ, խմիչք, քաղցրավենիք, պանրի տեսակամի, մրգեր... այս շարքը կարող է շարունակվել ևս մեկ կամ երկու տող՝ կախված նախապատվությունից: Ամանորյա գնումներն արդեն սկսվել են, թանկացումները՝ նույնպես: Պարզելու համար սպասվո՞ւմ են և կա՞ն արդյոք թանկացումներ այս օրերին, գրուցե՞ցի՞նք «Սպառողների աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Աշոտ Միրզոյանի հետ: Նրա խոսքով՝ թանկացումներ միշտ կան և այս օրերին նույնպես նկատելի են:

«Նախորդ տարիների համեմատ սննդամթերքի առումով բարձրացել է հացի, պանրի, կարագի գները, մսամթերքը նույնպես ամանորին ընդառաջ գնաճ է ապրում»: Ինչպես նշեց Աշոտ Միրզոյանը՝ նվազագույն աշխատավարձով ապրող սպառողի համար շատ դժվար է նշել տոները, սակայն հարկավոր չէ հարկեր և վարկեր կուտակել ամանորյա ճոխ սեղանի համար. «Նոր որոշման համաձայն հունվարի 2-ն արդեն աշխատանքային օր է լինելու, կարծում են տոնական օրերի կրճատմամբ աստիճանաբար կսկսենք ավելի ընտանեկան միջավայրում, առանց ավելորդ շքեղության ու ճոխության նշել Ամանորը»,- խոսքը եզրափակեց Աշոտ Միրզոյանը:

Պարզելու համար ինչպե՞ս են քաղաքացիները պատրաստվում տոնները դիմավորել այս տարի, հարցում կատարեցինք: Անգել Երվանդյանն ասաց. «Ընտանիքիս հետ անցկացրած ցանկացած վայրկյանը թանկ է, այդ պատճառով միշտ նախընտրել և նախընտրում են ընտանեկան միջավայրում»:

Մելինե Աղաբեկյանի խոսքով՝ արտերկրում ավելի մատչելի կարելի է դիմավորել Ամանորը, քան սեփական երկրում. «Ամիս-ամիս բարձրանում են տարբեր ապրանքների արժեքները, հնարավորության դեպքում են արտերկրում կանցկացնել տոները»:

Հարցումների արդյունքում՝ 10-ից 6 հարցված քաղաքացին նախընտրում է հանրապետությունում՝ ընտանեկան միջավայրում դիմավորել Ամանորը, 2-ը՝ Կարմիր ծովի ափին՝ Եգիպտոսում, 2-ը՝ Միացյալ Արաբական Եմիրություններում: Անկախ ամեն ինչից, հանրապետության հրապարակում ամանորյա գեղեցկուհին զարդարված է, շտապեք ձեր ներկայությամբ ավելի գեղեցկացնել ու զարդարել նաև ձեր գեղեցկուհուն:

Լիլիթ ԱճԵՄՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի
Հեռուստալրագրության բաժնի 2-րդ կուրսի
ուսանողուհի



Լուսանկարիչ, որ սիրում է նաև լուսանկարվել

«Կարիերայի սկզբը ազդարարվեց Մոսկվայում: Այսօր այս կետին են հասել ոգեշնչման շնորհիվ»,- ասում է 23-ամյա լուսանկարիչ Հարութ Ղարիբյանը: Նրա մոտ լուսանկարիչ դառնալու ցանկությունը խորացավ Մոսկվայում, երբ տեսնելով գեղեցիկ բազմաթիվ վայրեր ու հոյակերտ շինություններ, ցանկություն առաջացավ լուսանկարչական խցիկ ձեռք բերել և հավերժացնել դրանք, ինչու ոչ՝ նաև ընկերներին, որոնց հետ անցկացրած ցանկացած պահը թանկ էր իր համար: Ցանկության իրականացումը երկար սպասեցնել չտվեց. կարողացավ համապատասխան միջոցներ խնայելով՝ գնել լուսանկարչական խցիկ: Մի քանի ամիս լուսանկարելուց հետո համոզվեց, որ իրեն դուր է գալիս այդ աշխատանքը:

Հետևելով ուրիշ լուսանկարիչների աշխատանքներին՝ հասկացավ, որ իր նկարները որակով զիջում են. պատճառը լուսանկարչական ոչ պրոֆեսիոնալ խցիկն էր: Վաճառեց հինը, գուճար ավելացրեց և նորը գնեց:

«Երբ արդեն պրոֆեսիոնալ խցիկ ունեի, հմտանալու համար մնում էր վերապատրաստվել. երեք ամիս դասերի հաճախեցի, սովորեցի շատ կարևոր մանրուքներ և սկսեցի փոքր ելույթս խաղալիքները նկարել սպիտակ ֆոնի վրա»,-պատմում է Հարութը: Տեսնելով, որ վատ չի ստացվում, սկսեց աշխատել:

Հիմա վաստակում է իր սիրած գործն անելով՝ սա նրա հորքին է: Պրոֆեսիոնալ լուսանկարչությանը զբաղվում է երեք տարի: Ապագայում պլանավորում է ստուդիա բացել և ավելի զարգացնել իր հմտությունները: Այժմ նրա կյանքի կարգախոսն է՝ «Երբեք չհուսահատվել, գնալ միշտ առաջ և ձգտել ավելի»:

Ի դեպ, որքան էլ տարօրինակ թվա, նա սիրում է նաև լուսանկարվել: Եվ գտնում է, որ պրոֆեսիոնալ լուսանկարներ ունենալը ոգեշնչում է. «Քեզ տեսնում են այլ տեսանկյունից, ուրիշի հայացքով, ու բացի այդ, տարիներ անց այդ լուսանկարները գեղեցիկ հուշեր են արթնացնում»:

Լուիզա ՍԱՐԳՍՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետ, հեռուստալրագրության
2-րդ կուրսի ուսանողուհի

«Սևուրբայան» իրականություն

Նախաամանորյա շրջանն արտերկրում սկսվում է նոյեմբեր ամսվա վերջին ուրբաթ օրը: Հաճախորդների տեղատարափ, խցանումներ, զեղչեր ու մեծ թվով գնումներ, պատճառն իհարկե, «Սև ուրբաթ» է: Սևուրբայան գեղջային համակարգն ամենաբարձրն է տարվա ընթացքում մինչև 90 տոկոս զեղչ, որ ամուսն են գործատուներն՝ ապրանքների տեսականին թարմացնելու և պահեստներն ազատելու համար: Արտերկրում սև ուրբաթին սպառողները պատրաստվում են դեռ մեկ շաբաթ առաջ՝ գիշերելով տվյալ խանութի կամ առևտրի կենտրոնի դիմաց: Ձեռչային ճկուն համակարգը շատ անգամ ստիպում է գնորդներին քաջքույկի մեջ ընկնել: Մեծ զեղչերն ապահովում են բարձր շահույթ և խոշոր վաճառքներ: Ահա՛ ինչպես են առաջնորդվում գործատուները:



Հայկական իրականության մեջ «Սև ուրբաթ» հասկացությունն այնքան էլ ընկալելի չէ. չնայած զեղչեր գործում են և՛ տեխնիկայի, և՛ հագուստի վրա: Գրավիչ առաջարկներով զեղջային համակարգը շատ անգամ խաբուսիկ է: Ինչպես նշեց մեր գրուցակցուհի Մարի Գևորգյանը՝ հայ սպառողը խաբված է: «Արտերկրում սև ուրբաթն իրական զեղչերի օր է, և գնորդն ինքն է զգում զեղջային համակարգի առավելությունները»:

Մարիի կարծիքով, Հայաստանում վաճառքի ոլորտի աշխատակիցներն օգտվում են օրվա նշանակությունից և չնչին տոկոսով զեղչեր սահմանում:

Խոսեցի՞նք նաև Անի Սահակյանի հետ, որը դժգոհում էր առևտրի կենտրոններից մեկի՝ տվյալ օրվա աշխատանքից: Անիի խոսքով՝ արտերկրում զեղչերը տատանվում են 85-ից 90 տոկոսի սահմաններում, իսկ Հայաստանում՝ 30 տոկոս զեղչ սահմանելով՝ գործատուները բավարարվում են:

«Սև ուրբաթին՝ առևտրի կենտրոններից մեկում էի, գները, կարող են ասել, շատ չէին փոխվել, տեսականին գրեթե նույնն էր և անտանելի հերթեր էին, չնայած ինձ պես շատերը հասկացան, որ ուղղակի հիմարացնում են սպառողներին, և զեղջային համակարգը կիսով չափ է աշխատում: Այնուամենայնիվ, հասարակությունը նախընտրում է տարվա ընթացքում տվյալ օրը մեծածախ գնումներ կատարել, փորձելով առավել քիչ գուճար ծախսել»:

Փոքրիկ հարցումից պարզ դարձավ, որ Հայաստանում՝ 10 ից 6 մարդ 20-ից 40000 դրամ է նախատեսում սև ուրբաթյան գնումների համար: 10-ից 4-ը նախընտրում է գնել տեխնիկա զեղջված արժեքով՝ հազուստի փոխարեն, և չնայած իրար հակասող զեղջային համակարգից՝ դժգոհություններին՝ 10-ից 8 մարդ առևտրի կենտրոն է շտապում տվյալ օրը:

Լիլիթ ԱճԵՄՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետ, հեռուստալրագրության
2-րդ կուրսի ուսանողուհի



ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՏՐԱՍՏՈՒՄ» ԳՎԱՍԸՆԹ-ԱՑԻՆ

2021 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հայաստանի բոլոր մարզերի և Երևանի 25 երիտասարդներ մասնակցեցին ՀՀ ԿԳՄՍՆ կողմից կազմակերպված «Երիտասարդական աշխատողների վերապատրաստում» եռափուլ դասընթացին: Մասնավարժական համալսարանի 2 ներկայացուցիչ՝ Բանասիրական ֆակուլտետի դեկանատի մասնագետ Հովհաննես Սարգսյանը և հոգեբանության ֆակուլտետի մագիստրոս Ջուլիետա Գրիգորյանը դասընթացի ակտիվ մասնակիցներից էին: Երկամսյա վերապատրաստումների ընթացքում մասնակիցները հանդիպումների, սեմինար-քննարկումների, դասախոսությունների միջոցով ծանոթացան երիտասարդական աշխատանքի պատմությանը, հիմունքներին, երիտասարդական քաղաքականությանը, պետական հայեցակարգին, խնդիրներին, երիտասարդների հետ աշխատելու առանձնահատկություններին, հմտություններին, ինչպես նաև ոչ ֆորմալ կրթության ժամանակակից մեթոդներին, տեղական և միջազգային կառույցների կողմից իրականացվող երիտասարդական ծրագրերին:

Հայաստանը 2003 թվականից անդամակցում է ԱՊՀ անդամ երկրների երիտասարդական քաղաքականության կազմակերպությանը: Հովհաննես Սարգսյանը և Ջուլիետա Գրիգորյանը նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը ԿԳՄՍՆ ընտրությամբ մասնակցեցին նաև ՌԴ Եկատերինբուրգ քաղաքում անցկացվող «ԱՊՀ անդամ երկրների երիտասարդների հետ աշխատանքի



կազմակերպում» վերապատրաստման եռօրյա դասընթացներին՝ կազմակերպված Ռուսաստանի տեխնոլոգիական համալսարանի (МИРЭА-Российский технологический университет «базовая организация государственных участников СНГ по работе с молодежью») կողմից: Այցի շրջանակներում Հայաստանից, Բելառուսից, Ուկրաինայից, Ղրղզստանից և ՌԴ տարբեր շրջաններից ժամանած 20 մասնակիցները հանդիպումներ ունեցան ՌԴ Սվերդլովսկի մարզի և Եկատերինբուրգ քաղաքի երիտասարդական աշխատանքները համակարգող մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչների, Ուրալի դաշնային համալսարանի (Уральский федеральный университет имени первого Президента России Б.Н. Ельцина) երիտասարդների հետ աշխատանքի ամբիոնի պրոֆեսորադասախոս

ԱՊՀ անդամ երկրների ներկայացուցիչները կիսեցին իրենց երկրներում իրականացվող երիտասարդական աշխատանքների հաջողված փորձը, քննարկեցին երիտասարդական քաղաքականության արդի հիմնախնդիրները և մարտահրավերները, բանավոր համաձայնություններ կնքվեցին հետագա համագործակցային ծրագրերի վերաբերյալ: Երիտասարդական աշխատողները այցելեցին նաև Եկատերինբուրգ քաղաքի կրթական և մշակութային հաստատություններ, թանգարաններ: Մանկա-



սական անձնակազմի, Սվերդլովսկի մարզի առևտրաարդյունաբերական պալատի նախագահի հետ: Վերջիններս ներկայացրին տարածաշրջանի երիտասարդական քաղաքականության հիմնական ուղղություններն ու օրենսդրական նախաձեռնությունները, երիտասարդների անձնային և մասնագիտական աճին միտված ծրագրերը: Այցի ընթացքում

վարժական համալսարանի ներկայացուցիչներն այցի արդյունքում ստացել են հավաստագրեր և հրավեր՝ մասնակցելու Ռուսաստանի տեխնոլոգիական համալսարանի կողմից կազմակերպվող ուսումնական ծրագրին, որի ավարտին կստանան վկայականներ՝ համագործակցելու ԱՊՀ անդամ երկրների երիտասարդների հետ:

ԱՊԱԳ-Ա ԼՐԱԳՐՈՂԻ ԷՋ

ՊԱՏԵՐԱԶՄՆ ԻՆՁ ԱՎԵԼԻ ՀԱՍՈՒՆ ԴԱՐՁՐԵՑ

«Պատերազմի ժամանակ երազում էի հարազատներ չունենալ, չունենալ ընտանիք, որ ոչ ոք իմ կորուստը չզգար»,- մեզ հետ զրույցի ժամանակ ասաց Արցախյան երկրորդ պատերազմի մասնակից Էդգար Հովհաննիսյանը:

Էդգարը պատերազմի ընթացքում ծառայության է եղել, մինչ այդ գտնվել է Նոյեմբերյանի շրջանում, իսկ ռազմական գործողություններն սկսելուց 11 օր հետո տեղափոխվել է Արցախ՝ Մաղադիսի, Թալիշի շրջան՝ մասնակցելով ռազմական գործողություններին մինչև դրանց ավարտը: Պատերազմի ավարտից 60 օր հետո էլ զորացրվել է:

«Պատերազմ չէի տեսել երբեք, միայն լսել էի դրա մասին, այդ պատճառով էլ ունեի այնպիսի զգացողություններ, որոնք երբևիցե չէի ունեցել. սկզբում վախ կար, բայց ընթացքում սկսեցի կոտրել այն, որպեսզի կարողանամ կատարել այն, ինչ անհրաժեշտ էր այդ ժամանակ»,- ասում է Էդգարը: Էդգարի խոսքով երբևիցե զինտեխնիկայի և դեղորայքի պակաս չի նկատվել, եղել է փոքր-ինչ սննդի պակաս, ինչն այդ ժամանակ հասկանալի և ընդունելի էր:

«Երբ հեռախոսազանգի հնարավորություն էի ունենում, առաջինը մայրիկիս էի զանգահարում, բայց մեկ օրում մեկ անգամը ինձ համար բավական էր, էդպես ավելի ապահով էր, իսկ չզանգել չէի կարող, քանի որ գիտակցում էի, որ իմ զանգից շատ բան էր կախված և ընտանիքիս համար էլ սպասված էր»,-հիշում է նա:

Պատերազմի ընթացքում, բացի Էդգարից, սահմանի էր գտնվում նաև նրա եղբայրը, ով կամավորագրվել էր և մեկնել ռազմաճակատ: «Ինձ համար անընդունելի էր եղբորս ռազմաճակատ գնալը, քանի որ յուրաքանչյուր ընտանիքից մեկ հոգին բավական կլիներ սահմանին, եթե ամեն ընտանիքից մեկն այնտեղ լիներ, զինվորի պակաս չէիք ունենա, իսկ մեր ընտանիքից երկուսս էինք. դա խանգարում էր ինձ կենտրոնանալ, միայն եղբորս մասին էի մտածում»:

Պատերազմը նրան փոխեց, փոխեց, քանի որ նա սկսեց վերաբժարել կյանքը և այն մարդկանց, ովքեր շրջապատում են իրեն, սկսեց գնահատել կյանքի ամեն վայրկյանը: «Մինչ պատերազմը կյանքում շատ բաներից էի դժգոհում, չէի տեսնում՝ շուրջս ինչ ունեի և չէի գնահատում, իսկ պատերազմի ժամանակ, երբ գիտակցում էի, որ կարող է կորցնեմ այն, ինչ ունեմ, դրանք ավելի թանկ էին դառնում ինձ համար»:

Պատերազմից մեկ տարի հետո Էդգարն ունի շատ նպատակներ ու ցանկություններ. ցանկանում է սովորել և դառնալ ծրագրավորող:

«Պատերազմն ինձ ավելի հասուն դարձրեց, սկսեցի սիրել կյանքը»,-հավելում է Էդգարը՝ աչքերում թախիծ ու հույս, նաև՝ երազանքների հասնելու ձգտում:

Սուսաննա ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՀՊՄՀ հեռուստալրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի

ԸՆՏՐՆՏՐԱԿԱՆ ԽՈՇԵՐ

Դեկտեմբերի 5-ին Հայաստանի 8 մարզի 36 համայնքում տեղի ունեցավ ՏԻՄ ընտրություններ: Ընտրելու իրավունք ունեցողների միայն 42,48 տոկոսն է մասնակցություն ունեցել: Ամենաբարձր ցուցանիշը գանցվել է Լոռու մարզի Թունանյան համայնքում՝ 69,78 տոկոս, որտեղ ընտրելու իրավունք ունեցող 5029 քաղաքացուց 3509-ը կատարել է իր քաղաքացիական պարտքը: Թունանյան համայնքը ներառում է Թունանյան քաղաքը, Անիծոր, Շամուտ, Աթան, Լորուտ, Մարց, Քարինջ գյուղերը, որոնց միացան նաև Դսեղ և Չկալով համայնքները: Պայքարն ընթանում էր «Հանրապետություն», որի թեկնածուն Դսեղ գյուղի բնակիչ Սուրեն Թունանյանն էր, և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների միջև, որի թեկնածուն Քարինջ գյուղից Տիգրան Մխիթարյանն էր: Չայների մեծամասնությամբ Սուրեն Թունանյանը դարձավ Թունանյան խոշորացված համայնքի ղեկավար:

Բնակիչների մի մասը դրական է վերաբերվում ստեղծված իրավիճակին՝ կողմ է համայնքային խոշորացմանը, մյուս մասն իր անհանգստությունն է հայտնում: Սոնա Սմբատյանը, որը Թունանյան քաղաքի բնակիչ է, ընդգծեց, որ իրենց համայնքի համար խնդիր չի տեսնում, քանի որ կենտրոնում իրենք են, բայց ասում է. « Դսեղ գյուղի կամ մյուս բոլոր գյուղերի բնակիչները համար սա հարմար տարբերակ չէ, առաջ, երբ ինչ-որ թուղթ էր պետք, արագ ստացվում էր

գյուղապետարանի միջոցով ձեռք բերել, իսկ հիմա մինչև դիմեն համայնքապետարան, մինչև նրանք կապ հաստատեն գլխամասի հետ, բավականին երկար գործընթաց է»:

Դսեղի Գայանե Խառատյանը կողմ է խոշորացմանը, պատճառաբանելով, որ բյուջեն ավելի տեղին կօգտագործվի. պարզաբանում է. «Առաջ տարվա կտրվածքով միլիոնավոր գումար էր ծախսվում համայնքապետարանի աշխատակիցներին վարձատրելու համար, իսկ հիմա այդ գումարը կօգտագործվի ի շահ համայնքի»:

Քարինջ գյուղի բնակիչ Սեդա Մխիթարյանը նկատեց, որ գյուղն առանց այդ էլ մեծ քայլերով առաջ չէր գնում, իսկ հիմա փոքր գյուղերը միացնելով, մեծ համայնքներին բյուջեն իր հավասար բաշխման խնդիր է տեսնում: Անկախ նրանից՝ դրական թե բացասական են վերաբերվում իրավիճակին, բոլորն ընդհանուր դժգոհություն ունեն. աշխատատեղեր կրճատվեցին, և համայնքապետարանների աշխատակիցների մեծ մասը դարձավ գործազուրկ, իսկ գյուղերում աշխատանք գտնելն այդքան էլ հեշտ չէ:

Հավելենք, որ գյուղերում համայնքի ղեկավարի փոխարեն վարչական ներկայացուցիչներ կլինեն, բյուջեն էլ կտնօրինեն խոշորացած համայնքի ղեկավարն ու ավագանին:

Սյուզան ԽԱՌԱՏՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետ, հեռուստալրագրության 2-րդ կուրսի ուսանողուհի

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ. Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97: Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը: Հասցեն՝ Արշակունյաց 2 Տպաքանակ՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար: Հանձնված է տպագրության 24.12.2021 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՄՐՅԱՆ Բանասիրական գիտությունների թեկնածու Էջաղուրմը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՄՐՅԱՆ